

**ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը
ներկայացրեց Արագածոտնի մարզպետ Աշոտ Սիմոնյանին**

ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը Արագածոտնի մարզպետարանում ներկայացրեց նորանշանակ մարզպետ Աշոտ Սիմոնյանին:

Հանդիպմանը ներկա էին մարզպետարանի ղեկավար կազմը, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները, համայնքապետերը, մարզային ենթակայության կազմակերպությունների, ուժային կառույցների ղեկավարները:

Նախարարը կարեւորեց այս այցը, քանի որ այն իր առաջին պաշտոնական այցելությունն է մարզ, որը առաջիկայում բազմիցս է կայանալու:

-Թավշյա հեղափոխության որդյունքում նոր իշխանություն ունենք եւ մեր բոլորի նպատակն է անցման ժամանակաշրջանը անցնցում եւ դյուրին անցկացնելու,-ասաց նախարարը եւ նշեց, որ բոլորի պարտքն է գործողություններն իրականացնել բացառապես ՀՀ Սահմանադրության եւ օրենքների շրջանակներում:

Նախարարը կարեւորեց համայնքապետերի ժողովրդավար լինելու խնդիրը, խոսեց համայնքապետ-ավագանի հարաբերության, գործողությունները հանրության շահերին ծառայեցնելու անհրաժեշտության եւ օրախնդիր այլ հարցերի մասին: Նա նշեց Արագածոտնի մարզի մի շարք առանձնահատկությունների, գյուղատնտեսական մթերքների արտադրության եւ արտահանման, երկրի համաչափ զարգացման եւ այլ խնդիրների մասին:

Սուրեն Պապիկյանը շնորհավորեց Աշոտ Սիմոնյանին՝ մարզպետի պաշտոնում վերանշանակվելու կապակցությամբ եւ մաղթեց նպաստավոր գործունեություն ծավալել՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետության բարօրության :

Մարզպետ Աշոտ Սիմոնյանը հպարտությամբ նշեց, որ 8-9 ամիս առաջ իրենց նախանշած ծրագրերը, գործունեության տրամաբանությունը լիովին համահունչ են ներկա

պահանջներին: Նա վստահեցրեց, որ մարզի ղեկավարությունը, ողջ աշխատակազմն ու կառույցները համատեղ ի զորու են իրականացնելու առաջադրված խնդիրները:

Աշոտ Սիմոնյանը շնորհակալություն հայտնեց Հայ Հեղափոխական Դաշնակցությանը և երկրի վարչապետ Նիկոլ Փաշինյանին այն բանի համար, որ վստահեցին իրեն և հնարավորություն տվեցին ի կատար ածելու մարզի և երկրի զարգացման իր տեսլականը:

Սաթենիկ Զորյան